

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
(1979—1980)

Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուղարկված տեսչական տարեկան տեղեկագրից քաղվածաբար ներկայացնում ենք հետևյալ ծանոթությունները Ս. Թարգմանչաց վարժարանի 1979—1980 թվականների ուսումնական, բարոյական և նյութական գործունեության մասին:

Նշված ուսումնական տարում Ս. Թարգմանչաց վարժարանում պաշտոնավարել են 4 եկեղեցական և 25 աշխարհական ուսուցիչներ, «ուսուցչի մը հատուկ խղճմտությամբ», գործակցելով տեսուչ Տ. Կյուրեղ եպս. Գաբիկյանին:

Անցնող ուսումնական տարում վարժարանի երկսեռ ուսանողության թիվը եղել է 200, մանկապարտեզ՝ 31 մանչ և 33 աղջիկ, համագումար՝ 64, նախակրթարան՝ 33 մանչ, 38 աղջիկ, համագումար՝ 71, երկրորդական վարժարան՝ 22 մանչ, 43 աղջիկ, համագումար՝ 65:

Անցյալ տարվա 11 շրջանավարտներից չորսը շարունակում են իրենց համալսարանական կրթությունը, երեքը Երևանի համալսարանում՝ Անույշ Նագգաշյանը, Սոնա Պիթարյանը և Հակոբ Թումայանը, իսկ Լոնդոնի համալսարանում՝ Սիլվա Սարգսյանը: Մնացած յոթ շրջանավարտները Երուսաղեմում «կիետևին զանազան մասնավոր, գործնական դասընթացքներու և կամ նետված են կյանքի ասպարեզ»:

Երևանի պետական համալսարանում այժմ սովորում են Ս. Թարգմանչաց վարժարանից նախկին շրջանավարտ ութ ուսանողներ:

Վարժարանում դասավանդում են.

Մանկապարտեզի Ծաղիկ դասարանից սկսած հայերեն, անգլերեն, արաբերեն և եբրայեցերեն լեզուները: Վարժարանի դասավանդությունների պաշտոնական լեզուն հայերենն է:

1980 թվականի հունվարի 2—12 օրերին տեղի են ունեցել վարժարանի կիսամյա քննությունները, իսկ մայիսի 21—30 օրերին՝ ամավերջի քննությունները:

Այս ուսումնական տարում վարժարանի երկրորդական բաժնից շրջանավարտներ են եղել 10 տղա և աղջիկ ուսանողներ, որոնցից չորսը սովորելու են Երևանի պետական համալսարանում:

Տարեկան տեղեկագրում խոսվում է նաև վարժարանի մարմնակրթական աշխատանքների, ձեռագործի, բազարի և դպրոցական այլ հանդիսությունների մասին:

Տեղեկագրում կարևորությամբ նշվում է, որ տեսչության և ուսուցչական կազմի ուշադրության կենտրոնում է եղել «աշակերտության **հոգևոր-կրոնական** դաստիարակությունը»:

Վարժարանի «կրթական-բարոյական»

այս հաշվետվության կցվել է նաև **«տընտեսական հաշվետվությունը»:**

Սույն հաշվետվությունից երևում է, որ «դպրոցական կյանքի բարգավաճման, կենսունակության և արդյունավորման կարևորագույն ազդակներեն մին է խումբը արտասահմանյան ազնիվ նվիրատուներուն, որոնք իրենց բարոյական և տնտեսական գործակցությամբ կհանդիսանան ողնաշարը դպրոցական գործունեությանց»: Տեղեկագիրը ջերմ շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում բոլոր բարերարներին:

Տեղեկագրում տեսչության, ուսուցչական կազմի և «աշակերտության կողմե որդիական ամենաջերմ սիրո և շնորհակալության խոսքեր» են արձանագրված «մեր շատ սիրելի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա-ին, որուն բարեհաճ կարգադրությամբ վարժարանը այս տարի ևս օգտվեցավ Աբգարյան Ավանդի խնամակալութենեն 500 անգլիական սթերլինկի հատկացումով մը»:

Վարժարանի տեսուչ Տ. Կյուրեղ եպս. Գաբիկյանը, տարեկան իր տեղեկագրի վերջում «շնորհակալության և երախտագիտության սրտագին խոսք է» ուղղում Երուսաղեմի հայոց ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքին, «որ տարիներե ի վեր մեր տկար անձին հաճեցավ վստահել Սուրբ Աթոռի ամենեն պանծալի հաստատություններեն՝ Ս. Թարգմանչաց երկրորդական վարժարանի տեսչությունը և հետո այն բարի և հայրական խնամքին և հոգածության համար զոր երբեք չէ զլացած այս հաստատության և անոր նվիրական գործին նկատմամբ, իբրև գերագույն տեսուչն ու առաջնորդը այս մտքի և լույսի տան»: